ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

—

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕԾՄԱՆ ՏԱՍՆԵՄԻԿԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

Սեպտեմբերի 26 ին, Վարագայ խաչի տօնին, Թիֆլիսի Վանքի ս. եկեղեցում կատարուեցաւ ամենայն Հայոց Վեհ. կաթուղիկոսի օծման 11-դ տարեդարձը ամենամեծ շքով։ Մաղթանքին ներկայ էր Թիֆլիսի ամբողջ հոգևորականութիւնը, ուսանող սերունդը և խուռն բազմութիւն ժողովրդեան։ Այդ օրը Վեհափառին առաքուեցան բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ։

ԿԻԼԻԿԻՈՅ Տ. ՍԱՀԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՑՑԸ Կ. ՊՕԼԻՍ

Կ. Պոլսից գրում են մեզ, որ սեպտեմբեր ամսին Կ. Պոլիս է ժամանել Կիլիկիոյ ամենապատիւ Տ. Սահակ կաթուղիկոս Խապայեանը և ընդունուել է Հայրապետական մեծ և արտակարգ շքով թէ Ամենապատիւ Ս. Պատրիարքի, թէ ամբողջ ազգայինների և թէ կառավարութեան կողմից։

Պ. Կ. ԵԶԵԱՆԻ ՑԻՍՆԱՄԵԱԿ

«Լումայի» վերջին թերթը մամուլի տակ էր, երբ կարդացինք Պ. Բուրգից տեղւոյս ռուս լրագիրներին ուղղած հետեւեալ հեռագիրը.

«Պ. Կարապետ Ցարութիւնեան Եզեանցին յարգողների խումբը յայտարարում է, որ նոյեմբերի 6-ին լրանում է նորա պետական ծառայութեան յիսնամեակը և

որ նոքա, ովքեր ցանկանում են մասնակցել Ցօբելեարի անունը յաւերժացնելու նպատակով կազմուելիք դրամագլխի կազմելուն՝ կարող են նուէրներն ուղարկել Ե. Բ. Բաբայեանցին (Պ. Բուրգ, Մօնէտնի դվօր)։ Հաւաքուելիք դրամագլխի վերջնական կարգադրութիւնը թողնուած է Ցօբելեարի բարեհայեցողութեան»։

«Լուման» կաշխատէ միւս անգամ մանրամասն տեղեկութիւններ տալ այդ մասին. իսկ առ այժմ իւր սրտագին շնորհաւորութիւններն է ուղղում յարգելի յօբելեարի բազմամեայ պետական և գրական բեղմնաւոր գործունէութեան առիթով։

Կ. ՊՕԼՍԻՑ

Կ. Պօլսից մեր թղթակիցը հաղորդում է մեզ, որ ռուսահայ հոգևորական Բազուի արժ. Ներսէս քահ. Տէր Կարապետեանցը Իզմիրեան մրցանակաբաշխութեան ներկայացրած քարոզով իւր տարած դրամական նուէրը՝ յանուն Ամենապատիւ ս. պատրիարքի մի գրութեամբ թողել է ի նպաստ Կ. Պօլսի ս. Փրկեան Ազգ. Հիւանդանոցի մանկական բաժնին—ի յիշատակ իւր վաղամեռիկ որդի Յակովբիկի։

ԳԼԴԱՆԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Այս օրերս մենք առիթ ունեցանք տեսնել Թիֆլիսից 10 վերստ հեռու գտնուած Գլդան գիւղի նորաշէն հայ եկեղեցին, որ կառուցել է Նորին Մեծութեան սենեկապետ Կ. Ն. Հաքիմեանը։

Հաքիմեանները կալուածատէր են յիշեալ գիւղի ու շրջակայքի և պ. Հաքիմեանի հայրը, որ այժմ ընտանիքով տեղափոխուած է Գլդան, կառուցել է հնում՝ տեղական վրացիների համար եկեղեցի, իսկ որդին չուկենալով հոգևորապէս անմխիթար թողնել գիւղի մի բուռն հայ ժողովուրդը, շինել է նոցա համար հայ եկեղեցի։ Եկեղեցիներ ի հարկէ շատ կան գիւղերում և շատ էլ կառուցւում են այս և այն բարերարների ձեռքով, բայց եթէ մենք շեշտում ենք Գլդանի հայ եկեղեցին, դա ունի իւր յատուկ պատճառը. դա թէպէտ և մի շատ